



ՀՀ Նախագահին բնապահպանության նախարարը զեկուցել է ոլորտում իրականացվող բարեփոխումների մասին

Հանրապետության Նախագահի հետ աշխատանքային հանդիպման ընթացքում բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն այսօր զեկուցել է ոլորտում իրականացվող բարեփոխումների, ընթացիկ ծրագրերի և դրանց լուծման հնարավորությունների մասին: Արծվիկ Մինասյանը Նախագահին զեկուցել է բնական ռեսուրսների ելակետային տվյալների ամբողջական հաշվառման համակարգի ձևավորման համար ժամանակակից տեխնիկական, տեխնոլոգիական լուծումներ տալու, բնապահպանական փորձաքննության ինստիտուտի կատարելագործման, գործող թույլտվությունների և լիցենզիաների ընթացակարգերի պարզեցման նպատակով էլեկտրոնային համակարգ ներդնելու վերաբերյալ:

Բնապահպանության նախարարն անդրադարձել է նաև անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ու վերահսկմանը: Հանրապետության Նախագահը հանձնարարել է աշխատանքներ սկսել միասնական անտառային կառավարման համակարգի ստեղծման ուղղությամբ և ներկայացրել, Պիլիջանե ազգային պարկի երեք շիսկային մասնաշյուղերի պահպանությունը մասնավոր պահնորդական կազմակերպությանը

պատվիրակելու փորձնական ծրագիրը: Նախարար Մինասյանը զեկուցել է նաև կենսաբազմազանության անձնագրավորման, էկոտուրիզմի ներուժի արդյունավետ օգտագործման, բնապահպանական և բնօգտագործման վճարների քաղաքականության վերանայման ուղղությամբ զերատեսչության ձեռնարկած քայլերը: Հանրապետության Նախագահը հանձնարարել է նախարարին ակտիվացնել աշխատանքները բնություն-արտաքին պարտք մեխանիզմի գործադրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա Հայաստանի երկկողմ վարկային պարտավորություններից որոշակի միջոցներ ուղղել Հայաստանի բնապահպանական խնդիրների լուծմանը: Նախագահը նախարարի հետ քննարկել է Սևանա լճի պահպանության ու էկոհամակարգի վերականգնման միջոցառումներին վերաբերող հարցերը, տվել համապատասխան հանձնարարականներ: Բնապահպանության նախարարը զեկույցի ժամանակ ներկայացրել է Սևանե ազգային պարկը կենսոլորտային արգելավայրի վերածելու հեռանկարային ծրագիրը: Արծվիկ Մինասյանը զեկուցել է, որ Նախագահի հանձնարարությամբ Արարատյան դաշտում իրականացված ջրախնայողության արդյունքում խնայվել է 980.24 մլն մա/տ ջուր, սակայն առկա ջրօգտագործումը դեռևս զերազանցում է թույլատրելի ծավալները, որոնց կրճատման ուղղությամբ միջոցառումները շարունակվում են:

Հանրապետության Նախագահին ներկայացվել է նաև նախարարության կառուցվածքային և կադրային բարեփոխումների անհրաժեշտությունը:

Ուղերձ Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա կապակցությամբ



« Ես բնության հետ եմ» կոչն է ընտրել երկրագնդի բնակչությունը, որպես Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա 2017 թվականի կարգախոս: Այն վեր է հանում մեր ժամանակների համամարդկային ամենակարևոր հիմնահարցերից մեկը: Այսօր մարդու գործունեությունն այնպիսի ծավալներ ու բնույթ է ստացել, որ օրինաչափ հարց է ծագում՝ մարդը բնության դեմ է, թե՞ նրա հետ: Մարդկության ապագայի տեսլականը թելադրում է հարցի մեկ պատասխան՝ ժողովուրդների կայուն զարգացումը և հարատևումը հնարավոր է միայն բնության հետ ներդաշնակ ապրելով: Հարցը մեծ նշանակություն ունի նաև մեր երկրի և ժողովրդի համար: Այսօր մեր պատմական մեծ բնօրրանից մեզ բաժին հասած փոքր հատվածի հարուստ և ինքնատիպ բնաշխարհը պահպանելու և արժանապատվորեն սերունդներին փոխանցելու

հրամայականի առաջ ենք կանգնած: Դրա գիտակցումը պետք է գերակայի մեր գործունեության բոլոր ոլորտներում, ծրագրերում և նախաձեռնություններում: Տնտեսության զարգացումը պետք է հենվի ոչ թե բնական ռեսուրսների գերշահագործման, այլ պահպանված բնությունն ինքնին որպես արժեք և արժեք ստեղծող հենք դիտարկելու վրա: Այս և բնապահպանական այլ խնդիրներն հնարավոր չէ լուծել միայն պետական գործիքակազմով: Հայրենի բնության պահպանությունը պետք է լինի յուրաքանչյուրիս առաքելությունը՝ մանկահասակ երեխայից մինչև հասուն քաղաքացի, պետական ծառայողից մինչև բնական ռեսուրսի հաշվին ձեռներեցությամբ զբաղվողի: Բնապահպանությունը պետք է դառնա կենսակերպ: Շրջակա միջավայրի պահպանության գաղափարը պետք է իր կայուն տեղն ունենա մեր ժողովրդի արժեքային համակարգում: Բնապահպանությունը մեր պետականության հիմնաքարերից մեկն է և պահանջում է բոլորիս համարժեք մոտեցումը: Ամեն տարի միանալով միջազգային հանրության կողմից նշվող Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա միջոցառումներին՝ պետք է բազմապատկենք մեր ջանքերը և օրվա կարգախոսը կյանքի կոչենք ամենօրյա գործունեությամբ և յուրաքանչյուր քայլափոխի: Առաջնորդվելով օրվա խորհրդով՝ կոչ ենք անում մեր քաղաքացիներին և բոլոր շահագրգիռ կառույցներին համատեղել ջանքերը՝ հայրենի բնաշխարհի պահպանության և կայուն զարգացում ապահովող շրջակա միջավայր սերունդներին փոխանցելու կարևորագույն առաքելությունն իրականացնելու համար»:

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյան



Տույժ չճշտված տեղեկատվություն տրամադրելու համար

2017 թ. մայիսի 12-ին Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲԾ) քաղաքացիական նախաձեռնության կայքում (<http://www.armecofront.net/rahos/arjer/>) հրապարակվել էր «Անազատության մեջ պահվող արջերն ահազանգերից հետո անհետանում են» վերնագրով տեղեկատվություն: Հոդվածում նշվում էր, որ Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲԾ) քաղաքացիական նախաձեռնության անդամ Լևոն Գալստյանը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Արարատի տարածքային բաժնի աշխատակիցներից մեկի

հետ, ով չճշտված տեղեկատվություն է փոխանցել, և որն, ինչպես հետագայում պարզվել է, իրականությանը չէր համապատասխանել: Հրապարակման մեջ բերված փաստերը պարզաբանելու համար ՀՀ բնապահպանության նախարարությունում անցկացվել է ուսումնասիրություն, որին ներգրավվել է նաև Լևոն Գալստյանը: Ուսումնասիրության արդյունքում՝ ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Արարատի տարածքային բաժնի ավագ-պետական տեսուչ Ա. Բադալյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողության ձևով:

Բնության պահպանությունը դարձնելով քաղաքականության հիմնական առանցքներից մեկը, կանաչ լույս կվառենք մեր զարգացման համար

Հունիսի 5-ին ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի են ունեցել Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան և Բնապահպանի օրվան նվիրված տոնական միջոցառումներ: Միջոցառմանը մասնակցել են պետական գերատեսչությունների, Հայաստանում այլ երկրների դեսպանատների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, հասարակական, գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ և կրթօջախների ուսուցիչներ ու սաներ: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, իր խոսքում հիշատակելով օրվա կարգախոսը՝ «ես բնության հետ եմ», նկատել է, որ այն պատահական



չի ընտրված, քանի որ լինելով շրջակա միջավայրի կարևորագույն օղակ և համակարգ, մարդն ազդում է դրա վրա իր գործունեությամբ և լինում են իրավիճակներ, երբ այդ գործունեությունը ոչ միայն խաթարում է բնության հիմնական օրենքներն, այլ նաև սպառնալիք է ստեղծում մարդկության ապագայի համար: Ըստ նախարարի՝ «Ամենալավը բնությունը գիտի» բնության օրենքը փաստում է, որ այն ինքնին հավասարակշռված, ներդաշնակ համակարգ է և այդ համակարգի վրա որևէ ազդեցություն չի կարող անհետևանք մնալ. «Բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է, այնտեղ ոչինչ հենց այնպես չի կորչում և ավելին՝ այնտեղ ամեն ինչի համար պետք է վճարել: Սրանք հիմնական կանոններն են, որոնք, ցավոք, մենք մոռանում ենք և հաճախ մոռացության հետևանքն այն է լինում, որ ինքներս մեր համար ստեղծում ենք սպառնալիքներ և հետո փորձում ենք այդ սպառնալիքները հաղթահարել, մինչդեռ շատ ավելի դյուրին կլիներ, եթե ապրեինք այդ կանոնների ներքո և չձևավորեինք ռիսկեր մեր իսկ գործունեության համար», - նշել է Ա. Մինասյանը և կարևորել բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը: Բնապահպանության նախարարը շեշտել է, որ վերականգնվող բնական ռեսուրսներից պետք է

օգտվել այնպես, որպեսզի այն կարողանա վերականգնվել, մինչդեռ ներկայումս առկա է այդ հավասարակշռության խախտումը և դեգրադացիան: Չվերականգնվող ռեսուրսի օգտագործումը պետք է նվազեցնել, ոչ միայն այն պատճառով, որ այն միայն ներկա սերնդի սեփականությունը չէ, այլ նաև այն պատճառով, որ դրա հետևանքները խախտվում են բնական էկոհամակարգերը: Հիշեցնելով, որ ներկայումս Հայաստանը ստորագրել է երկու տասնյակից ավելի բնապահպանական համաձայնագրեր՝ Ա. Մինասյանն շեշտել է. «Մեր կարևոր խնդիրն է միանալով առաջադեմ մարդկության, միջազգային կառույցների գործադրած ջանքերին, որոնք կարևորում են շրջակա միջավայրի պահպանությունը՝ որպես մարդկության ապագայի կարևորագույն հարցերից մեկը, պետք է կարողանանք այն դարձնել մեր երկրում տարվող քաղաքականության առանցքներից մեկը՝ դպրոցից, տնից մինչև բարձրագույն հաստատություններ: Մենք պետք է երեխային մանկուց դաստիարակենք, նրան փոխանցենք բնության հետ ներդաշնակ ապրելու, էկոհամակարգի հավասարակշռությունը գիտակցելու սկզբունքը: Սա, ի տարբերություն մյուս դեպքերի, ոչ թե միայն օրենքներում պետք է արտացոլվի, այլև դառնա մարդու գոյության հիմնական կանոնը: Իսկ այս կանոնը, որպես ինքնիշխան պետություն, ձևակերպված է նաև մեր հիմնական փաստաթղթում՝ ՀՀ Սահմանադրության մեջ, որի 12-րդ հոդվածը հռչակում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը որպես սահմանադրական կարևորագույն պահանջ, որպես պետության հիմնարար պարտավորություն: Եվ այս գիտակցությունը պետք է փոխանցվի սերնդից սերունդ: Բազմակողմանի պարտավորությունների ներքո, մենք ձեզ հետ միասին պետք է կարողանանք առաջադրել առավել ակտիվ քաղաքականություն, քանզի պասիվությունը կստիպի մեզ դուրս գալ տեղում»:

• Բնության ղախողանությունը դարձնելով ֆաղափականության հիմնական առանցքներից մեկը, կանաչ լույս կվառենք մեր զարգացման համար

Սկիզբը էջ 3 |

Բնապահպանության նախարարը կարևորել է, նաև հանրության մասնակցությունը գործընթացներին, շնորհակալություն է հայտնել, հասարակական բոլոր կազմակերպություններին և նախաձեռնությունների հեղինակներին՝ այս ամենին օժանդակելու համար: Բնապահպանության ոլորտում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար նախարարության մի խումբ աշխատակիցներ պարգևատրվել են շնորհակալագրերով և նվերներով: Միջոցառման շրջանակներում WWF-Հայաստանի կողմից ներկայացվել է «Մաքուր Հայաստան» ծրագրով իրականացվող աշխատանքների ինտերակտիվ քարտեզը, «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոնի և Շենգավիթի պատանեկան ստեղծագործական կենտրոնի սաների մասնակցությամբ կազմակերպվել էր կավճակարների և յուղանկարների ցուցադրություն-մրցույթ: Տեղի է ունեցել Արամ Արեխցյանի լուսանկարների, գեղանկարիչ Մերուժան Մխեյանի գծանկարների և ՀՀ Տավուշի մարզի Հովք համայնքի դպրոցի աշակերտների նկարների ցուցահանդես: Իսկ «Էկզոտարիում Ամազոն» ընկերությունը կազմակերպել էր էկզոտիկ կենդանիների ցուցադ-



րում: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպված միջոցառման ավարտին ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցները և Civil Voices ՀԿ-ի ակտիվիստներն աղբից մաքրման աշխատանքներ են իրականացրել Երևանի փողոցների և Օղակաձև զբոսայգու տարածքներում:

Միջավայրը մաքուր պահելը՝ կենսակերպ է, դաստիարակություն



Շնորհավորելով Բնապահպանի և Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա կապակցությամբ Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն ասաց, որ սա տոնն է այն մարդկանց, ում համար շրջակա միջավայրի պահպանությունը ոչ թե խոսք է, այլ էություն և ապրելակերպ: Լրագրողների հետ զրույցում նա անդրադարձավ բնության վրա հանքարդյունաբերության վնասակար ազդեցության թեմային, նշեց, որ հանքարդյունաբերությունը, ի թիվս բազմաթիվ այլ վնասների, կարող է էական վնասներ պատճառել ջրային ռեսուրսներին, օդային ավազանին և կանաչ տարածքներին: «Հանքարդյունաբերությունն աշխարհում համարվում է այն

հիմնական ուղղությունը, որտեղ չափանիշներն ու պահանջները շատ խիստ են: Մենք ևս փորձում ենք այնպիսի նորմեր առաջադրել, որպեսզի թե շահագործման, և թե պոչամբարների բացասական դրսևորումները կարողանանք հասցնել նվազագույնի», - ասաց Արծվիկ Մինասյանը: Նախարարն անդրադառնալով կառավարության կողմից նախաձեռնած «Մաքուր Հայաստան» նախագծին, շեշտեց, որ շրջակա միջավայրը մաքուր պահելը դաստիարակության և կենսակերպի հարց է, որին գիտակցաբար պետք է մոտենա յուրաքանչյուր անձ: Ինչ վերաբերում է պոլիէթիլենային տոպրակները շրջանառությունից հանելու առաջարկներին՝ Արծվիկ Մինասյանը տեղեկացրեց, որ առնվազն երկու գերատեսչություն՝ Տնտեսական զարգացման և ներդրումների, ինչպես նաև Բնապահպանության նախարարությունը, ունեն մշակված հայեցակարգ՝ ոչ միայն շրջանառությունից հանելու պոլիէթիլենային տոպրակները, այլև դրանք փոխարինելու նոր կենսամիջոցներով: Նա կարևորեց բնությունը պահպանելու մշակույթը դեռ վաղ տարիքից երեխայի մեջ արմատավորելու պրակտիկան: Ըստ այդմ Բնապահպանության նախարարությունը մինչև տարեվերջ ստանձնել է էկոլոգիա-տիրակության հայեցակարգ ներկայացնելու պարտավորություն: Անդրադառնալով աղբի վերամշակման գործարաններ հիմնելուն՝ Արծվիկ Մինասյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած գերատեսչությունը ներկայումս նախաձեռնում է դրամաշնորհային ծրագրերով աջակցություն ցուցաբերել այդ գործընթացին: «Հույս ունեմ, որ գործընթացում կներգրավվի նաև մասնավոր հատվածը: Միայն բյուջետային միջոցներով դրական արդյունքների հասնելը շատ դժվար է», - իր խոսքն ամփոփեց Արծվիկ Մինասյանը:

Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային պաշարների տնօրինման նոր մոդելը կբավարարի բոլոր կողմերին



Նուհիսի 3-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների 2017-2021 թվականների կառավարման պլանի, ինչպես նաև ջրային պաշարների վերականգնմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Մարտիրոսյանը, ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության նախարարությունների, Ջրային պետական կոմիտեի ներկայացուցիչներ, Արարատյան դաշտում ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսությունների ղեկավարներ: Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, հայտնելով, որ աշխատանքային քննարկումը կազմակերպվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի կատարման շրջանակներում, նշել է մշակվող փաստաթղթի հիմնական սկզբունքները՝ «հանդիպման նպատակն այն է, որ բիզնեսի ներկայացուցիչների հետ քննարկենք կարգավորման այն մոդելը, որը, մեր կարծիքով, պետք է հնարավորություն տա ամբողջ ստորերկրյա ջրային պաշարը՝ նախ բերել, գոնե այս պահի դրությամբ, նորմատիվներով սահմանված չափաքանակին, այդ նպատակով իրականացնել գործողություններ, տրամադրելով նաև ժամանակ բիզնեսին՝ հարմարվելու այս կանոններին: Երկրորդ՝ նպաստելու, որպեսզի ձևավորվի Արարատյան ջրային ռեսուրսների պաշարների շուկան: Երրորդ՝ ընթացքում, երբ մենք ունենանք գիտականորեն հիմնավորված վերականգնվող ջրային ռեսուրսի մեծությունը, նաև դաշտը վերանայել՝ բիզնեսին էլ ավելի լավ պայմաններ առաջարկելու տեսակետից»: Նախարարը շեշտել է, որ օրենքով հաստատված Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի ծավալը՝ 1.1 մլրդ խորանարդ մետրը, գիտականորեն նոր ուսումնասիրու-

թյունների միջոցով ճշգրտելու խնդիր է դրված և այն արվելու է մոտ ժամանակներում: Ստորերկրյա խորքային ջրերի նակարդակը վերականգնելու համար կրճատումներ են իրականացվելու և՛ ոռոգման, և՛ ձկնաբուծության համար օգտագործվող ջրերի ծավալներում: Ձկնաբուծության համար օգտագործվող 809 մլն խորանարդ մետրը նախատեսվում է նվազեցնել մինչև 400 մլն-ի, ոռոգման նպատակով 578 մլն խորանարդ մետր ներկայիս հաշվարկային կամ կողմնորոշիչ ծավալը պետք է նվազեցվի մինչև 228 մլն խորանարդ մետրի՝ նպատակ ունենալով Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի օգտագործման ներկայի 1,6 մլրդ խորանարդ մետր ծավալը հասցնել 1,1 մլրդ խորանարդ մետրի: Ըստ նախարարի՝ եթե ձկնաբուծական տնտեսությունները կարողանան ջրի երկրորդային օգտագործման խնդիրները լուծել՝ այսինքն օգտագործված ջուրը մաքրեն և բերեն ոռոգման համար պիտանիի որակի, ապա ջրի օգտագործման ծավալները նրանց մոտ քիչ կկրճատվեն: Տեղեկացվել է նաև, որ ՀՀ կառավարությունում մշակվում է և կընդունվի ավտոմատ կառավարման ջրաչափական համակարգի ներդրման տեխնիկական չափանիշները և ցանկացած անհատ կարող է ցանկացած տեղից գնել այդ սարքը, որևէ ուղղորդում այս հարցում բացառվելու է: Իսկ ավտոմատ կառավարման համակարգի ներդրման հիմնական նպատակն այն է, որ բացառվեն ոլորտի կոռուպցիոն



ռիսկերը, վերացվի պետական ծառայողի և տնտեսվարողի անմիջական շփումը, ինչպես նաև՝ ընկերությունների կողմից նախատեսվածից ավել ջրի օգտագործումը: Ներկայացնելով նոր մշակվող կառավարման պլանը՝ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը շեշտել է, որ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի վերականգնման գործողությունների փաստաթղթով աշխատանքներ են իրականացվելու ստորերկրյա ջրերի օգտագործման բոլոր ուղղություններով՝ ոռոգման, կենցաղային, ձկնաբուծության, արդյունաբերության: Հիմնական թիրախային միջոցառումները իրականացվելու են դաշտում դեռևս առկա ապօրինի ջրօգտագործողների ուղղությամբ: «Սակայն դա բավարար չի կարող լինել և պետությունը նախատեսում է նաև այլ միջոցառումներ, մասնավորապես՝ առկա ջրօգտագործման ծավալների վերանայում և նվազեցում»:

• Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային դաշարների ճնշման մոտեցումը կրավարարի բոլոր կողմերին

Սկիզբը՝ էջ 51

Այս միջոցառումները իրականացվելու են փուլային տարբերակով, որպեսզի դժվարություններ չստեղծվեն ձեռներեցների համար: Ըստ կառավարման պլանի՝ բոլոր ջրօգտագործման թույլտվությունները հետ են կանչվելու և նոր պայմաններով նոր թույլտվություններ են տրվելու 3 տարի ժամկետով: Նախատեսվում է ավելի շատ ջրօգտագործման ծավալների նվազեցում այն ձկնաբուծական տնտեսություններում, որտեղ չեն ներդրվի ջրի խնայողությամբ միտված նոր տեխնոլոգիաներ: Նախատեսվում է նաև բոլոր ջրօգտագործող տնտեսություններում և ընկերություններում տեղադրել առցանց ջրի ավտոմատ կառավարման համակարգ՝ ջրօգտագործումն առցանց վերահսկելի դարձնելու համար»,- նշել է Խ. Հակոբյանը: «Հայ ձկնաբույծների միավորում» ՀԿ-ի նախագահ Արմեն Բունիաթյանը, համաձայնելով ջրի խնայողությանն ուղղված միջոցառումների հետ, նշել է, որ ձկնաբուծական տնտեսությունները ներկայում գտնվում են ծանր վիճակում և խնդրել է ավտոմատ ջրաչափական համակարգի ձեռքբերումը չվերապահել միայն տնտեսություններին, քանի որ դրանք բավականին բարձր արժեք ունեն: ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Մարտիրո-

սյանը շեշտել է, որ առաջնային խնդիր է Արարատյան ստորերկրյա ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործումը և այդ ուղղությամբ տարվող քայլերը չպետք է վնասեն ձեռներեցներին: Այդ նպատակով էլ կազմակերպվել է քննարկում, որպեսզի գտնեն փոխադարձ ընդունելի լուծումներ: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը շեշտել է, որ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի խնդրի լուծումը գտնվում է ՀՀ Նախագահի և վարչապետի վերահսկողության ներքո և այն լուծելու վճռական և անբեկանելի քայլեր են իրականացվում: Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը ստուգումներ է իրականացնում Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում և այն սկսել է 10 ամենախոշոր ընկերություններից: Արձանագրելով, որ քննարկման բոլոր կողմերն էլ համաձայն են առցանց ավտոմատ կառավարման ջրաչափական համակարգի ներդրման առաջարկի հետ, Արծվիկ Մինասյանը նշել է, որ դրանց տեղադրման և սպասարկման հարցերի ուղղությամբ կկազմակերպվեն քննարկումներ և կդիտարկվեն հնարավոր բոլոր մեխանիզմները:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկի անցյալն ու ապագան

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը հիմնադրվել է 1933 թվականին, ինիցիատիվա-առաջատար ազգությամբ լեհ Էդմոնդ Լեոպոլդի Լեոնովիչի կողմից: Սկզբնական շրջանում Էդմոնդ Լեոնովիչը հավաքել է իրեն հետաքրքրող ծառատեսակներ: Տարիների ընթացքում այս հետաքրքրությունը ավելի մեծ թափ է առել մեծացնելով ծառատեսակների կենդանի հավաքածուի քանակը: Հետագայում ծառաթփատեսակների կենդանի հավաքածուն օրինականացվեց և Ստեփանավան քաղաքի մոտ գտնվող Գյուլագարակին սահմանակից անտառային գոտու մոտակայքում հիմնադրվեց «Սոճուտ» դենդրոպարկը, որն այժմ զբաղեցնում է շուրջ 35 հա տարածք: Տեսակային կազմի համալրման աշխատանքների արդյունքում առաջացել էր տարածքների ընդլայնման խնդիր: Քանի որ հնարավոր չէր սահմանակից անտառները հատել, դենդրոպարկը տարածվեց ոչ ծառապատ և բացատային հատվածներում, ինչն ավելի բարդացրեց գեղատեսիլ ծառատեսակների ներմուծումը և ռեինտրահուկցիան: Լուրջ ուշադրություն է ցուցաբերվել նաև ինչպես մեկամյա, այնպես էլ բազմամյա ծաղիկների տեսակների հանդեպ: Դենդրոպարկը ավելի գեղատեսիլ և հար-



մարավետ դարձնելու նպատակով տեղադրվել են մստաբույսեր, զուգարաններ, տաղավարներ, կամրջակներ: Ժամանակի ընթացքում այստեղ կառուցվել են ջերմատներ, որտեղ աճեցվել և ներկայումս էլ աճեցվում են ասեղնատերևավոր և գեղազարդ ծառաթփատեսակներ՝ լրացման, կլիմայավարժեցման աշխատանքներ կատարելու, ինչպես նաև՝ վաճառելու նպատակով:

• Ստեփանավանի «Սոճուս» դենդրոդարկի անցյալն ու աղազան

Սկիզբը էջ 6 /

Այստեղ փորձակվել են ներմուծված և Հայաստանում առկա շուրջ 2500 զեղազարդային տեսակներ և ձևեր: Էդմոնդ Լեոնովիչը մահացել է 1986 թվականին, 84 տարեկան հասակում, հուղարկավորությունը տեղի է ունեցել դենդրոպարկի տարածքում: Ներկայումս նրա գործը շարունակում է որդին՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Վիտալի Լեոնովիչը, որը 2014 թվականին արժանացել է Բնապահպանության նախարարի շնորհակալագրի, իսկ 24.12.2015 թ.-N394-Ա հրամանով ՀՀ Բնապահպանության նախարարության «Բնապահպանության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալով: Ներկայումս դենդրոպարկում աճում են շուրջ 483 ծառաթփատեսակներ, պարտիզային ձևեր, որոնցից միայն հասուն ծառերը կազմում են 4446 հատ. Հարկ է նշել, որ միայն «սոճի սովորականի» թիվը հասնում է մոտ 2000-ի, դենդրոպարկին սահմանակից անտառտնտեսությունում շատ է սոճիների քանակը, որն էլ առիթ է տվել դենդրոպարկը անվանել «Սոճուս»: Դենդրոպարկում մշտապես ուսումնասիրություն է իրականացվում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի գիտաշխատողների կողմից: Պետք է հատուկ նշել այս ծառատեսակի այն օգուտը, որ բույսը տալիս է մարդուն: Միասեռ փափուկ սոճու փայտը հրաշալի մշակվում է, սոսնձվում, փայլեցվում և ներկվում, այդ պատճառով նա անփոխարինելի շինանյութ է: Լինելով դեկորատիվ փայտատեսակ, սոճին լայնորեն բազմացվում է շատ երկրներում և ունի տարբեր տեսակներ: Ծառը հարուստ է եթերային յուղերով և դրանից ստանում են բազմաթիվ դեղամիջոցներ: Այստեղ կենդանի նմուշների ցուցադրության, պահպանության և խնամքի հետ միասին ընթանում են աշխատանքներ՝ մեծ պահանջարկ ունեցող տեսակների բազմացման և տարածման ուղղությամբ: Գտնվելով առողջարանային գոտում՝ դենդրոպարկը ծա-

ռայում է որպես հանգստավայր, զբոսաշրջության կենտրոն, թանգարանային տիպի գոդոտրիկ անկյուն: Մեծ է դենդրոպարկի առողջարանային դերը գարնան վերջին ամռան սկզբին, քանի որ Լոռվա մարզում տեղի է ունենում սոճիների փոշոտում, որն անգնահատելի օգուտ է տալիս մեր առողջությանը: Այդ ժամանակահատվածում դենդրոպարկ այցելողներից շատերը նկատած կլինեն բաց դեղին փոշին, որը հայտնվում է սոճիների շրջակայքում՝ օդում կամ գետնի վրա, և քչերը միայն կարող են կռահել, թե այս միկրոսկոպիկ փոշեհատիկները ինչպիսի բնական առողջարար միջոց կարող են հանդիսանալ մեզ համար: Տարբեր տարիներին կատարված գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սոճու փոշին ունի կազդուրիչ հատկություն և բարելավում է օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը: Այն պարունակում է լայն սպեկտրի վիտամիններ և միներալներ, այդ թվում՝ վիտամին A Ա-կարոտին, B1, B2, B3, B6, ֆոլաթթու, վիտամին D, վիտամին E, ինչպես նաև՝ բազմաթիվ հանքային նյութեր և ամինաթթուներ: Կա կարծիք, ըստ որի՝ սոճու փոշին կարող է նպաստել մարդու շնչառական և էնդոկրին համակարգերի բարելավմանը, նվազեցնել ցավազգացողությունը, կարգավորել արյան մեջ խոլեստերինի պարունակությունը: Շնորհիվ իր այս հատկանիշների՝ սոճու փոշին լայն կիրառություն ունի բուսաբուժության մեջ և ծառայում է որպես հույս մի շարք դեղամիջոցների համար: Այսպիսով հաշվի առնելով վերը նշված հանգամանքները փաստենք, որ «Սոճուս» դենդրոպարկը լինելով բնության պահպանվող տարածք, կարելի է համարել ոչ միայն հանգստյան գոտի այլև՝ առողջարանային լուրջ կենտրոն:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ նյութը պատրաստեց Ա. Խալաթյանը



Հերքում

• 1in.am կայքում հարադարակված լուրում սեղ են գտել անձեռություններ

1in.am կայքում հունիսի 6-ին հրապարակված «Ազատ գետը կրկին վտանգված է», «Վերսկսվել են գետից գաղտնի կերպով ջուր տանելու աշխատանքները» վերնագրով լուրում ապատեղեկատվություն է տարածվել: ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակը Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ծրագրի հետ որևէ առնչություն չի ունեցել և չունի: ՀՀ բնապահպանության նախարարության լիազորությունների մեջ էլետրաէներգիային վերաբերող, առավել ևս դրա տնտեսման գործառույթ չկա՝ հետևաբար նաև այդ ոլորտին ուղղվող վարկային գումարներին չի առնչվում: Վերոհիշյալ ծրագիրն վարկային ծրագիր է և իրականացվում է Համաշխարհա-

յին բանկի ֆինանսավորմամբ: ՀՀ բնապահպանության նախարարությունն իր լիազորությունների շրջանակում իրականացնում է միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեից Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ծրագրի փոփոխված նախագիծ ՀՀ բնապահպանության նախարարություն՝ փորձաքննության չի ներկայացվել:

ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Warren Wilson College-ի ուսանողները Հայաստանում



2017 թ. մայիսի 24-ից հունիսի 6-ը Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների (Ամերիկյան խորհուրդներ) Հայաստանի գրասենյակը ուսումնական այց-ծրագիր էր կազմակերպել Warren Wilson քոլեջի մի խումբ ուսանողների համար: ԱՄՆ-ի էկոլոգիական ուղղվածություն ունեցող լավագույն քոլեջներից մեկի՝ Warren Wilson College-ի ուսանողները Հայաստան էին ժամանել երկշաբաթյա ուսումնական պրակտիկա անցնելու: Ամերիկյան խորհուրդների գրասենյակը արդեն երկրորդ անգամ է հյուրընկալում Warren Wilson College-ի ուսանողներին: Առաջին խումբը Հայաստան էր եկել 2015 թ. ամռանը: Հյուրերը այցելել են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող հատուկ պահպանվող տարածքներ:

Այցից առաջ խումբը ցանկություն էր հայտնել հանդիպել և քննարկումներ անցկացնել բնապահպանության պետական քաղաքականությունն իրականացնող գերա-

տեսչությունների պատասխանատուների հետ: Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների առաջին հանդիպումը կայացել է ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խ. Հակոբյանի մոտ:

Խ. Հակոբյանը, Ամերիկյան խորհուրդի տնօրեն Քերրն Սմիթը և գրասենյակի ղեկավար Նանե Աբրահամյանը քննարկել են համագործակցության ներկա վիճակը, նախանշել այցի օրակարգը: Հանդիպման ավարտին քննարկվել են նաև ՀՀ բնապահպանության նախարարության և Ամերիկյան խորհուրդների համագործակցությունը շարունակական դարձնելու մեխանիզմները:

Հաջորդ հանդիպումը կայացել էր Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների գրասենյակում: Հանդիպմանը մասնակցում էր ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության էկոտուրիզմի զարգացման գլխավոր մասնագետ Վ.Սարգսյանը, ով հանդիպման ընթացքում Warren Wilson College-ի ուսանողա-դասախոսական խմբին ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության գործառնությունները, և ավելի մանրամասնորեն ներկայացրել ՀՀ-ում իրականացվող էկոտուրիզմի զարգացման հեռանկարները: ՀՀ բնապահպանության նախարարության մասնագետների և ուսանողների միջև տեղի է ունեցել քննարկումներ ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ:



Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
 Խմբագիր՝ Սանվել Սկրչյան
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
 011 818 517